

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պարճառված վնասները գնահատող հանձնաժողովի 12.05.2013 թ. նիստի

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետ՝

Ա.Ղահրամանյանի

ՀՀ գյուղատնտեսության նախարար՝

Ս.Կարապետյանի

ՀՀ գյուղատնտեսության նախարարի

առաջին տեղակալ՝

Գ.Բաղիյանի

ՀՀ գյուղատնտեսության նախարարի

տեղակալ՝

Գ.Պետրոսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝

Դ.Սամսոնյանի

ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական

վարչության ճգնաժամային կենտրոնի ավագ

հրահանգիչ՝

Գ.Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ՝

Ա.Այվազյանի

ՀՀ Արմավիրի մարզի կարկուտից տուժած 43 համայնքների ղեկավարների

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Կարկրահարությունից փուժած ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում ստեղծված իրավիճակի մասին

/ Ա. Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ /

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը օրակարգային հարցի առնչությամբ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ 2013 թվականի մայիսի 12-ին ժամը 13.40-14.10-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած կարկրահարությունից էապես վնասվել են ՀՀ Արմավիրի մարզի Գեղաշեն, Ամասիա, Շենավան, Ջրաշեն, Ակնայիճ, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Բամբակաշատ, Տանձուր, Նալբանդյան, Հուշակերտ, Ալաշկերտ, Արաքս /Արմ./, Արմավիր, Հայկավան, Արևիկ, Բերքաշատ, Մրգաշատ, Սարդարապատ, Արագած, Արշալույս, Ծաղկալանջ, Ֆերիկ, Հայթաղ, Երասխահուն, Լուսազյուղ, Գեղակերտ, Լենուդի, Այգեշատ/Արմ./, Ծաղկունք, Ջրառատ, Գայ, Կանանդ, Տավրիկ, Մայիսյան, Ջրարբի, Նորապատ, Հայկաշեն, Մեծ ամոր, Ամբերդ, Աղավնատուն և Ակնաշեն գյուղերի գյուղատնտեսական մշակաբույսերը, ցանքատարածություններն ու այգիները: Նշված համայնքների բնակիչները, ստեղծված իրավիճակի պատճառով, իրենց վրդովմունքն արտահայտել են միջհամայնքային և հանրապետական նշանակության ճանապարհները փակելով և կարկուրի հասցրած վնասի համար փոխհատուցում պահանջելով:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը միաժամանակ նշեց, որ անհրաժեշտության դեպքում պետք է կարկրահարությունից փուժած համայնքների ղեկավարները թարմացնեն ՀՀ Արմավիրի մարզպետի 17.02.2012 թ. N 60 որոշման 3-րդ կետի պահանջով համայնքներում ստեղծված արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովների կազմերը՝ համայնքներում կարկրահարության պատճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները կատարելու գործընթացին պատրաստ լինելու համար:

Օրակարգային հարցի առնչությամբ արտահայտվեց նաև ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանը: Նա մասնավորապես նշեց, որ կարկրահարությունն իր թողած հետևանքներով, իրոք, աղետաբեր եղավ ՀՀ Արմավիրի մարզի վերը նշված գյուղական համայնքների գյուղատնտեսության համար: Ելնելով ստեղծված իրավիճակից, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները կազմակերպված և օպերատիվ կարգով իրականացնելու համար: Գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման ձևաչափի մշակման, ինչպես նաև ազգաբնակչությանը համապատասխան մեթոդական խորհրդարկություն տալու նպատակով ՀՀ Արմավիրի մարզ կգործուղվեն մասնագետներ և աշխատանքային խումբ ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գ. Բաղիյանի գլխավորությամբ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը հավաստիացրեց, որ համապարասխան ընթացակարգով սեղմ ժամկետում կավարտվեն մարզի համայնքներում կարկրահարության պարճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը մարզային հանձնաժողովում քննարկելուց հետո համաձայնեցված ակտերը կներկայացվեն հանրապետական հանձնաժողով:

Հանձնաժողովը որոշում է՝

1. Առաջարկել կարկրահարությունից փրոժած համայնքների ղեկավարներին՝

ա/ թարմացնել ՀՀ Արմավիրի մարզպետի 17.02.2012 թ. N 60 որոշման 3-րդ կետի պահանջով համայնքներում սրեղծված արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պարճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովների կազմերը՝ համայնքներում կարկրահարության պարճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները կատարելու գործընթացին պարտասուր լինելու նպատակով,


բ/ համայնքային հանձնաժողովների ակտերը կազմել և մարզային հանձնաժողով ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունում մշակվող և փրամադրվելիք ձևաչափին համապարասխան:

Հանձնաժողովի նախագահ՝



Մ. Քարտաշյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Դ. Դավթյան